ՄՈՒԿՆ ԸՆԿԵՐԱՆՈՒՄ Է ՄԿԱՆ ՀԵՏ

Մուկն ուզում է ուժեղ ընկեր գտնել, բայց չի իմանում, թե ով է ուժեղը: Դիմում է արևին: Արևն ասում է.

– Ամպն է ուժեղ: Ամպն ինձ ծածկում է:

Ամպին է դիմում: Ամպն ասում է.

– Քամին է ուժեղ: Քամին ինձ քշում է:

Քամուն է դիմում: Քամին ասում է.

– Քարն է ուժեղ: Քամին քարին բան չի անի:

Քարին է դիմում: Քարն ասում է.

– Մարդն է ուժեղ: Մարդն ինձ ճեղքում է:

Մարդուն է դիմում: Մարդն ասում է.

– Ցորենն է ուժեղ: Առանց ցորենի ես կմեռնեմ:

Ցորենին է դիմում: Ցորենն ասում է.

– Մուկն է ուժեղ: Մուկն ինձ ուտում է:

– Որ այդպես է, ուրեմն ուժեղը մուկն է. ես էլ մկան հետ կընկերանամ, – ինքն իրեն ասում է մուկը:

Հ

Հայկը հուր է, հրեղեն,
Հայկը հող է, հողեղեն,
Հայկը՝ հերոս հաղթական,
Հայկը՝ հրաշք հայկական:

Կ

Կովից կաթը կկթեն,
Կարոն կաթը կխմի,
Կովը կայտառ կգնա,
Կարոն կայտառ կմնա: